ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/92

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Բիոտեկ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Բիոտեկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Վ. Խեչյանի, Կ. Տիմոշկովայի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով բաց մրցույթ, Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակաշարերի և փականների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Բիոտեկ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 01.10.2021թ.-ի ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերություն ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չեղյալ համարել թիվ 9 արձանագրությունը, կրկին անցկացնել դիմումների ընտրության փուլի քննարկման ընթացակարգը՝ հաշվի առնելով բողոքի փաստարկները:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 27.09.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 30.09.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/15906-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 01.10.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

04.10.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/92 համարի ծածկագիրը:

12.10.2021թ.-ին և 01.11.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 12.10.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 01.11.2021թ.-ին:

2. «Բիոտեկ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Բիոտեկ» ՍՊԸ-ն 01.10.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Բողոք ներկայացրած անձի անունը, հասցեն՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն «ԲԻՈՏԵԿ» ՍՊԸ, INN 7701326412, KPP 770101001, OGRN 1037701011435, 101000, Մոսկվա, Արխանգելսկի նրբ., 3/1, էլ. Փոստ՝ ooo.biotek@bk.ru;

Պատվիրատուի անունը, հասցեները՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ, Արմավիրի մարզ, Մեծամոր:

Կոդ, վիճարկվող գնումների ընթացակարգի առարկա. «HAEK-BMAPDzB-16/21» ընթացակարգի ծածկագիր, համապատասխան սպառողների հովացման համակարգի (SOOP) համապատասխան սարքավորումների սպառողների (SOOP) հովացման համակարգի I և II խողովակաշարերի և կցամասերի մատակարարում: Հայկական ԱԷԿ -ի թիվ 2 էներգաբլոկը:

Վեճի առարկա.

«ԲԻՈՏԵԿ» ՍՊԸ-ն բաց մրցույթի մասնակից է՝ «ՀԱԷԿ-ԲՄԱՓՁԲ -16/21» ծածկագրով:

Ըստ գնումների հանձնաժողովի նիստի թիվ 9 արձանագրության, «ԲԻՈՏԵԿ» ՍՊԸ-ի դիմումը գնահատվել է անբավարար՝ գնային առաջարկը բացակայում է (հավելված թիվ 2):

«ԲԻՈՏԵԿ» ՍՊԸ-ն համաձայն չէ հետևյալ հիմքերով ընդունված որոշման հետ:

1. Գնումների հանձնաժողովը արտոնյալ պայմաններ է ստեղծել գնումների մի քանի մասնակիցների համար:

Ըստ արձանագրության՝ մասնակիցների դիմումները ճանաչվել են բավարար, սակայն արձանագրությունները պարունակում են դիմումների վերաբերյալ դիտողություններ՝ ES Group s.r.o., Rusatomservs JSC, ESS LLC, Energotrast JSC, I SIEnergy LLC:

Մենք կարծում ենք, որ արձանագրությունում նշված դիտողությունները կարևոր են, քանի որ դրանք ուղղակիորեն վերաբերում են գնումների առարկային: Արձանագրության տեքստից հետևում է, որ մասնակիցներին հնարավորություն է տրվել փոփոխել առաջարկվող ապրանքի նկարագրությունը:

Բաց մրցույթի հայտարարությունը և հրավերը չեն պարունակում դրույթներ (նորմեր), որոնք թույլ են տալիս գնումների հանձնաժողովին հստակեցնել հայտերը, իսկ մասնակիցներին փոխել հայտերի էությունը:

Համաձայն 7.2 կետի: Դիմումի հրավերները գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:

Սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող դիմումները գնահատվում են «բավարար», հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում:

Արձանագրությունից հետևում է, որ ES Group s.r.o., Rusatomservs JSC, ESS LLC, Energotrast JSC, I SIEnergy LLC մասնակիցների դիմումները չեն համապատասխանում հրավերի պայմաններին, հետևաբար, պետք է գնահատվեին որպես անբավարար և մերժվեին: 2. II մասի «բաց մրցույթի հայտ ներկայացնելու հրահանգների» 1-ին կետում նշվում է «Համապատասխանության չափանիշ». դիմում-ընթացակարգին մասնակցության հայտարարության՝ համաձայն N 1 հավելվածի. իր կողմից հաստատված առաջարկվող արտադրանքի ամբողջական նկարագրությունը՝ համաձայն N N 1.1 հավելվածի: Նրա կողմից հաստատված հայտարարությունը՝ հայկական ծագման աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման վերաբերյալ, որը նախատեսված է սույն հրավերի 1-ին մասի 4.3-րդ կետի 7-րդ ենթակետով՝ համաձայն հավելված №1.2-ի.,

գործակալության համաձայնագրի և սույն պայմանագրի կողմ հանդիսացող անձի տվյալների պատճենը, եթե Պայմանագիրը կկատարվի գործակալության միջոցով. պայմանագիր համատեղ գործունեության վերաբերյալ, եթե մասնակիցները գնումների ընթացակարգին մասնակցում են որպես համատեղ գործունեություն (կոնսորցիում) 16; առաջարկված ընդհանուր գնի բաշխումը. Գնված ապրանքների գները մեկ միավորի համար՝ համաձայն N 2.1 հավելվածի:

«ԲԻՈՏԵԿ» ՍՊԸ-ի դիմումը համապատասխանում է ԲՈԼՈՐ չափանիշներին, արձանագրության մեջ համապատասխանության չափանիշներին համապատասխան «ԲԻՈՏԵԿ» ՍՊԸ-ի դիմումի վերաբերյալ մեկնաբանություններ չկան:

Գնումների հանձնաժողովի եզրակացությունը, որ «ԲԻՈՏԵԿ» ՍՊԸ-ն գնի առաջարկ չի տրամադրել, սխալ է:

«ԲԻՈՏԵԿ» ՍՊԸ-ն տրամադրել է 2.1 ձևը, «առաջարկված ապրանքների գների բաշխումը մեկ միավորի համար ընդհանուր գնի մեջ», որից հստակ երևում է յուրաքանչյուր լոտի արժեքը:

Այս ձևը պարունակում է ԲՈԼՈՐ անհրաժեշտ տեղեկությունները՝ պատվերի յուրաքանչյուր լոտի գնի վերաբերյալ եզրակացություն անելու համար:

Ձև 2.1. պարունակում է ավելի շատ տեղեկատվություն, քան ձև 2-ը. 2.1. ձևի բովանդակությունից երեվում են բոլոր տեղեկությունները, որոնք պետք է նշված լինեն 2-րդ ձևում, այն է Մրցույթի ծածկագիրը, ապրանքների անվանումը, ԱԱՀ-ն, ընդհանուր գները:

Համաձայն Ձև 2.1-ի: «ԲԻՈՏԵԿ» ՍՊԸ-ի հայտի 1-ին լոտի գինը կազմում է՝ 2,065,543.82 ԱՄՆ դոլար, 2-րդ լոտը՝ 1,339,020.45 ԱՄՆ դոլար:

Այսպիսով, ընդհանուր առմամբ, ԲԻՈՏԵԿ ՍՊԸ-ի տրամադրած փաստաթղթերը պարունակում են բոլոր անհրաժեշտ տեղեկությունները և հնարավորություն են տալիս միանշանակ եզրակացություն անել դիմումի արժեքի վերաբերյալ:

Հետևաբար, գնումների հանձնաժողովը հիմքեր չուներ մերժելու «ԲԻՈՏԵԿ» ՍՊԸ-ի դիմումը:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չեղյալ համարել թիվ 9 արձանագրությունը, կրկին անցկացնել դիմումների ընտրության փուլի քննարկման ընթացակարգը՝ հաշվի առնելով բողոքի փաստարկները:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 04.10.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/16186-2021 գրությամբ դիմել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու)՝ հնարավորություն տալով «Բիոտեկ» ՍՊԸ-ի կողմից 01.10.2021թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 07.10.2021թ.-ին թիվ Ե/40/2667-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

««ԲԻՈՏԵԿ» ՍՊԸ-ի բողոքի քննության նպատակով ներկայացնում եմ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գրավոր դիրքորոշումը:

ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման շրջանակներում Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակաշարերի և փականների մատակարարման նպատակով 2021թ. հուլիսի 23-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որի հայտերի բացման օր (հայտերի ներկայացման վերջնաժամկետ) է սահմանվել 09.09.2021թ.:

Գնման ընթացակարգը կազմված է 2 չափաբաժնից, սակայն Ընթացակարգը շարունակվել է միայն №2 չափաբաժնի մասով, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Ընթացակարգը №1 չափաբաժնի մասով կասեցվել է:

«ԲԻՈՏԵԿ» ՍՊԸ-ն, ի թիվս այլ մասնակիցների, Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել №1 և №2 չափաբաժինների համար:

Գնահատող հանձնաժողովը հայտերի բացման և գնահատման նիստում №2 չափաբաժնի համար հայտ ներկայացրած մասնակիցներից «ԲԻՈՏԵԿ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ անբավարար և մերժել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն Որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, քանի որ նրա հայտում բացակայում է իր կողմից հաստատված գնային առաջարկը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաստատված

էլեկտրոնային ձևով կազմակերպվող գնման ընթացակարգերում օգտագործվող գնման հայտարարության և հրավերի օրինակելի ձևերի Հավելված №2 ձևաշափը:

Գործելով ՀՀ օրենսդրությամբ՝ գնահատող հանձնաժողովը «ԲԻՈՏԵԿ» ՍՊԸ-ին իր հայտում առկա անհամապատասխանությունների շտկման առաջարկ չի ներկայացրել, քանի որ Որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի, այն է՝ հայտում ներառված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ «ԲԻՈՏԵԿ» ՍՊԸ-ն չի հանդիսանում ՀՀ ռեզիդենտ, հետևաբար տվյալ բացառությունը չի վերաբերում նրան: Միևնույն ժամանակ նույն՝ 40-րդ կետի համաձայն՝ գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը: Էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգում (այսուհետ՝ Համակարգ), ինչպես գնահատող հանձնաժողովի նախագահի, այնպես էլ գնահատող հանձնաժողովի անդամների էջերում, բացակայում է «ԲԻՈՏԵԿ» ՍՊԸ-ի կողմից հաստատված գնային առաջարկը՝ հրավերով սահմանված Հավելված №2-ը: Համակարգում Հավելված №2-ի փոխարեն առկա է միայն շհաստատված Հավելված №2.1 (Ընդհանուր գնի բացվածք), որը «ԲԻՈՏԵԿ» ՍՊԸ-ի պնդմամբ պարունակում է բոլոր անհրաժեշտ տեղեկությունները յուրաքանչյուր լոտի գնի վերաբերյալ եզրակացություն անելու համար:

Բողոքի պահանջը, գտնում եմ անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ գնահատող հանձնաժողովի կողմից կատարված գործողությունները բացառապես հիմնված են ՀՀ Գնումների օրենսդրության և իրավական այլ ակտերի վրա:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/92 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների

հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակաշարերի և փականների ձեռքբերման նպատակով 23.07.2021թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բիոտեկ» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման նիստի օր է սահմանվել մինչև 09.09.2021թ.-ին ժամը 11:00-ն ներառյալ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 09.09.2021թ.-ից մինչև 24.09.2021թ.-ի նիստի թիվ 9 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «Բիոտեկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար, քանի որ բացակայում է Ընկերության կողմից հաստատված գնային առաջարկը:

v. Բողոքներ քննող անձը 21.10.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-Լ0/1/17274-2021 գրությամբ գրությամբ դիմել է Armeps համակարգը սպասարկող կազմակերպությանը և խնդրել է հայտնել արդյոք «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով բաց մրցույթի հրավերը պատրաստվել է ՀՀ կառավարության 06.04.2017թ.-ի թիվ 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կարգը հաստատելու մասին» կարգի համապատասխան, այն է՝ «Ֆինանսական չափորոշիչ» դաշտում առկա է եղել թիվ 2 հավելվածի (գնային առաջարկ) բաժինը, թե ոչ: Եթե ոչ, ապա խնդրում եմ հայտնել վերոնշյալ բաժնի բացակայության պատճառների մասին տեղեկատվություն:

vi. Ի պատասխան վերոնշյալ գրության, 27.10.2021թ.-ի ներկայացված թիվ 21-29 գրությամբ հայտնել են, որ ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգում հայտերի վերբեռնելու/բեռնելու (upload/download) գործառույթն իրականացվում է հետևյալ կերպ՝ մասնակիցը իր լոկալ համակարգչի միջոցով կազմում է իր հայտը, փաթեթավորում է հայտերի փաթեթավորման գործիքով, որը ևս ներբեռնվում է համակարգից համակարգչի մեջ և, օգտվելով ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգից բեռևված գործիքից, այնուհետև վերբեռնում համակարգ: Այս գործընթացի արդյունքում հայտի փաթեթը կոդավորվում է անվտանգության նկատառումներից ելնելով:

Հայտերը համակարգի տվյալների բազայում պահվում են կոդավորված վիճակում՝ դարձյալ անվտանգության նկատառումներից ելնելով: Հետագայում հայտերը բեռնելիս ապակոդավորվում են ապակոդավորման բանալու միջոցով: Այս ողջ գործընթացի աշխատանքի վրա համակարգը սպասարկող ընկերությունը որևէ վերահսկողության կամ դիտարկման հնարավորություն չունի:

«ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով գևաևշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով «Բիոտեկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մասնակցության հայտի փաթեթը պատշաճ կերպով ապակոդավորվել և առկա է ARMEPS համակարգում: Ներկայացված հայտի փաթեթը (կցվում է) տեղադրված է ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգի հանրային բաժնում:

Փաստաթղթերի գնահատումը մեր ընկերության գործառույթներից դուրս է, այն իրականացվում է պավիրատուի կողմից:

vii. https://armeps.am/ppcm/ կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների շարքում առկա է նաև «Բիոտեկ» ՍՊԸ-ն, սակայն վերջինիս հայտի փաթեթի թիվ 1 և թիվ 2 չափաբաժիններում բացակայում է թիվ 2 հավելվածը՝ գնային առաջարկը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Բիոտեկ» ՍՊԸ-ի կողմից 01.10.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա

հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից հաստատած դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե

վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան (որոշ բացառություններով), ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակաշարերի և փականների ձեռքբերման նպատակով 23.07.2021թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.09.2021թ.-ից մինչև 24.09.2021թ.-ի նիստի թիվ 9 արձանագրության 6-րդ կետով արձանագրվել է, որ «Բիոտեկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար, քանի որ բացակայում է Ընկերության կողմից հաստատված գնային առաջարկը:

Բողոքներ քննող անձը 21.10.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-Լ0/1/17274-2021 գրությամբ գրությամբ դիմել է Armeps համակարգը սպասարկող կազմակերպությանը և խնդրել է հայտնել արդյոք «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով բաց մրցույթի հրավերը պատրաստվել է ՀՀ կառավարության 06.04.2017թ.-ի թիվ 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կարգը հաստատելու մասին» կարգի համապատասխան, այն է՝ «Ֆինանսական չափորոշիչ» դաշտում առկա է եղել թիվ 2 հավելվածի (գնային

առաջարկ) բաժինը, թե ոչ: Եթե ոչ, ապա խնդրում եմ հայտնել վերոնշյալ բաժնի բացակայության պատճառների մասին տեղեկատվություն: Ի պատասխան վերոնշյալ գրության, 27.10.2021թ.-ի ներկայացված թիվ 21-29 գրությամբ հայտնել են, որ ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգում հայտերի վերբեռնելու/բեռնելու (upload/download) գործառույթն իրականացվում է հետևյալ կերպ՝ մասնակիցը իր լոկալ համակարգչի միջոցով կազմում է իր հայտը, փաթեթավորում է հայտերի փաթեթավորման գործիքով, որը ևս ներբեռնվում է համակարգից համակարգչի մեջ և, օգտվելով ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգից բեռևված գործիքից, այնուհետև վերբեռնում համակարգ: Այս գործընթացի արդյունքում հայտի փաթեթը կոդավորվում է անվտանգության նկատառումներից ելնելով: Հայտերը համակարգի տվյալների բազայում պահվում են կոդավորված վիճակում՝ դարձյալ անվտանգության նկատառումներից ելնելով: Հետագայում հայտերը բեռնելիս ապակոդավորվում են ապակոդավորման բանալու միջոցով: Այս ողջ գործընթացի աշխատանքի վրա համակարգը սպասարկող ընկերությունը որևէ վերահսկողության կամ դիտարկման հնարավորություն չունի: «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով գևաևշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով «Բիոտեկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մասնակցության հայտի փաթեթը պատշաճ կերպով ապակոդավորվել և առկա է ARMEPS համակարգում: Ներկայացված հայտի փաթեթը (կցվում է) տեղադրված է ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգի հանրային բաժնում:

https://armeps.am/ppcm/ կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների շարքում առկա է նաև «Բիոտեկ» ՍՊԸ-ն, սակայն վերջինիս հայտի փաթեթի թիվ 1 և թիվ 2 չափաբաժիններում բացակայում է թիվ 2 հավելվածը՝ գնային առաջարկը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ ընթացակարգին «Բիոտեկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթը թերի է, պայմանավորված հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու հանգամանքով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Բիոտեկ» ՍՊԸ-ի կողմից ներբեռնված հայտի փաթեթում

բացակայել է թիվ 2 հավելվածը՝ գնային առաջարկը, որի բացակայության պայմաններում ներկայացված հայտն ենթակա է մերժման՝ առանց շտկման հնարավորության ընձեռնման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Բիոտեկ» ՍՊԸ-ի կողմից 01.10.2021թ.-ի-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/92 ծածկագրով ներկայացրած բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**